ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

AB certification

«24» 10 2023

ք. Երևան

# ՈՐՈՇՈՒՄ № 2

## «ՄՍ և Ընկերներ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-12/23>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ-ի և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի միջև 2023թ.-ի ապրիլի 06-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.66 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր): Համաձայն պայմանագրի №1 Հավելվածի Վաճառողը ստանձնել է Մաքրող և փայլեցնող արտադրանքի մատակարարման պարտավորություն և նախատեսված Ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 2023թ.-ի օգոստոսի 08-ը: «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթները, այն է, «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-12/23>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ-ի և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի միջև 2023թ.-ի ապրիլի 06-ին կնքված թիվ 2.66 պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «ՄՍ և Ընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Ընկերության ընդհանուր բաժնի պետին՝ սույն որոշումը մեկօրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКРЫТОЕ АКЦ. ОБЩЕСТВО
CLOSED JOINT-STOCK COMPANY
*01216144*

Ա. Գասպարյան
Գլխավոր տնօրեն